

Աղփատի պէս մեմաւոր
ձաւբուն եգերքը նըստած.
Քեզ կը սպասեմ
Ով անծանօթ սիրելի:

Եւ հոս է որ մենք կը դռնենք կատարեալ, բարախուն արդիականութիւնը Հ. Վ. Յովհաննէսեանի ձայնին: Այս դարուն մէջ որ այնքան պէտք ունի բանաստեղծներու, որովհետեւ միայն բանաստեղծութեամբ է որ աստուածայինը կը վերածնի աշխարհիս վրայ — ինչպէս իրաւամբ կ'ըսէ Յ. Ճ. Փիլիսոսայի, յառաջաբանը դրող — լաւագոյն գրողները սիրով ողջունեցին այս հայուն երգը:

Անոր բանաստեղծութիւնը, հոգիի արտայայտութիւն նիւթի այս սեւաթոյր դարուն մէջ, ընթերցողին համար անկասկած կը կազմէ սրբարար աւագան մը: Մեր մէջ, իսկապէս, խանդ կ'արթնցնէ, եւ ատոր համար է որ մենք չենք կրնար շնորհակալ չըլլալ բանաստեղծ Փիլիպպոս Պաղլինիի, որ իբրեւ բանաստեղծ դայն թարգմանած է, մեկնելով անոր բոլոր ինքնատիպ երգերանդները եւ դայն մեզի ընծայելով շատ ներդաշնակ եւ կատարեալ տողերով:

Մենք շարունակ պիտի ծռինք քաղելու համար աղնիւ ձայները իր շարադրութիւններէն, ինչպէս «Աղօթք սրտերու համար», «Աղօթք տխրութեան մէջ», «Հրաժեշտ», շարադրութիւններ որ մեր մտքին եւ սրտին կը բերեն ներդաշնակ արձագանգը մեծ Աղքատին (Ս. Փրանչիսկոս Աստիպաղի) «Արարածներու երգ»ին: Մենք պիտի ծռինք «Հայերուն» ուղղուած քնարերգութիւններուն վրայ, ուր կը լսենք որ բանաստեղծը խորհրդապաշտի մեղմ ձայնով բայց մտածումի խորութեամբ իբրեւ հինաւորաց երգիչի, կը հրաւիրէ որ հաւաքուին բոլոր հայերը, որպէսզի անոնց միակ անհուն սէրէն ծնի նահատակ հայրենիքին համար անդորրադին արշալոյս մը, որպէսզի, յետ իրենց երկար պանդխտութեան աշխարհի ճանապարհներուն վրայ,

դաւակներուն շնորհուի համբուրել իրենց սիրելի երկիրը: Եւ պիտի ծռինք վերջապէս այն քնարերգութիւններուն վրայ որ կը կազմեն «Հայ դիւղ» շարքը:

Այս վերջին քնարերգութիւնները թէեւ Հայաստանի վրայ կը խօսին, այն երկրին՝ որու բարձր լեռները ծածկուած են մայրիկներով, սակայն սիրելի կը դառնան մեզի՝ իտալացիներու: Սիրուն յղացումներ, լի նահապետական համով, խտացած դրոյցներու վերջիչումներով, պատմական կամ վիպական, դիւցազնական կամ դերերկրային, ժողովուրդի մը՝ որուն սեւ ճակատագիր մը վերապահեց թափառիլ, իբրեւ միակ պայման՝ փրկելու համար ինքզինքը այն պատերազմներէն որոնց շարունակ թատր եղած է իր երկիրը:

Առասպել եւ պատմութիւն իրարու հետ կը ձուլուին այդ երգերուն մէջ, տալու համար ընթերցողին՝ կարծես պիտի ուզէինք ըսել՝ Աւետարան մը, (այսինքն) բարձր ժողովուրդի մը աստուածային քերթուածը, որուն մէջ ամբողջապէս կը պարունակուի բովանդակ զմայլելի աշխարհածնութիւնը: Հ. Վ. Յովհաննէսեան որ մեզի ըսած է.

Փողոցին մէջ եթէ երբեք հանդիպի
Լակոտ մը մերկ, սեւ ու խոշոր աչքերով
Որ կը շրջի աւելով «Մեր Հայրենիք»
Բերէ՛ք ինձ գայն, բերէ՛ք իմ գիրկըս սիրով,

որպէսզի անոր թուխ երեսին վրայ կարենայ տպաւորել համբոյրով մը՝ դրոշմը ըմբոստ հոգիի մը եւ աչքերուն մէջ՝ հայկական արեւի փառքի առաւօտը:

Հ. Վ. Յովհաննէսեան, կը կրկնենք, որ սիրոյ շեշտ մը ունի հանդէպ իր բոլոր եղբայրներուն, մեզի կը սիրցնէ վառ եւ անկեղծ սիրով մը՝ իր նահատակ հայրենիքը, եւ զմայլելի կը դարձնէ գայն մեզի՝ իր վճիռ եւ ամենաբարձր երգով:

ԼՈՒԻՃԻ ԹԻՋԱԹՈՅ

Ն Ե Ր Շ Ն Զ Ո Ւ Մ Ն Ե Ր Ը

Դուք կը դիմէ՛ք վիպագործով
Սիւքերով լի ափունքէ՛ք ափ,
Հիւսելով կեանք մ'որուն ցոլով
Կը պարուրուի խնդրեմ անամպ՝
Հոգւոյս երկնի՝ տակ ապահով
Շրջող ոգւո՛յն հայրենատապ:

Դուք կը տեսնէ՛ք ըստուերներուն
Ընթացքն ի՛նչպէս բլրալանջէ՛ն
Կը սափ վար, եւ ասմազուն
Մեծ լինն ի՛նչպէս տարտամօրէն
Կը հծծէ երգն իր սիրասուն
Մայրամուտին մէջ ոսկեղէն:

Ափերն արդէն կը լեցուին բիւր
Դաշնակներով երգեհոնի,
Ու կ'ելլէ հովն իր քափքափուր
Քարայրներէն, եւ հանելի
Առած սըրինգն իր հեշտալուր՝
Պուրակներուն մէջ կը շրջի:

Բայց կը տեսնէ՛ք քէ ան ի՛նչպէս
Յանուած գոյներն երբեք մէջ,
Իր վարդագոյն մատովն անտես
Յար կը քշէ տեղով մ'անշէջ
Դեպի գիւղին քաւուտներն հեզ,
Դեպի բերրի դաշտերը գէշ:

Ու դուք կը գգա՞ք որ կը յածին
Լընանոյշներ՝ իմ արփաքել
Երգներու առագաստին,
Ու կը մնջեն խօսքեր ընտել,
Որոնք, աւա՛ղ, իմ քաջագին
Հոգիս չ'ուզեր ալ ունկնդրել:

Մոռցած եմ ես իմ տարիքիս
Ուրախութեան ժամերն ոսկի,
Այլ չեմ ուզեր լըսել միշտ գիս
Յուզող սիրոյ խօսքերն յուրի,
Ու ինձ համար միտքս ու հոգիս
Լոկ քոնուրո՛հ մ'են տաժանքի:

Այլ չեմ ցանկար գիտնալ որ կայ
Մեր հոգւոյն մէջ յոյսն ու բարին,
Որոնց կառչած միտքը կրնայ
Գտնել տաճարն ըստփանքին,
Եւ շիջել ցուն որ առօրեայ
Իմ անդո՛հն է անհընարին:

Հրճուանքն անդարձ յոյս է տըւած
Իմ ծաղկատի կեանքէն ամայ,
Եւ չեմ կրնար ժպտիլ երբ քաց
Աչքերս ընդմիշտ իրենց վըրայ
Կը գգան երկինքն համատարած
Վիհի մը պէս համր ու հսկայ:

Նե՛ մեռած է. եւ ալ չ'ապրիր.
Չ'ապրիր աղջիկն աներկային,
Առաւօտուն, երբ շողալիր
Արանետի ծայրամասին
Նե՛ կը ծաղկէր ու կու գար հիտ՝
Ո՛րքան հրճուանք իմ հոգիին:

Հիմա քար մ'են դրեր վըրան,
Ու բարեգութ խաչ մը լոյսէ,
Հոս հոն նետուած ծաղիկներ կան,
Որոնց վըրայ կ'իջնեն ցօղէ
Կարկըքումներ, ու ամէն բան
Ներս շուրջ արդ լուռ կ'արտասուէ:

Շիրմաքարին վըրայ երկու
Խօսքեր լոկ կան, երկու բառեր,
Որոնք կ'ըսեն որ իր աղու
Շուտ է յամրած կեանքը քիթեռ,
Եւ քէ անունն իր քաղցրեգու
Աստուածամոր սուրբ անունն էր:

Ո՛րքան փոքրիկ է շիրմն իր,
Եւ քունն անոր ո՛րքան խաղաղ,
Ոգիներ կան որ կու գան հիտ
Շուրջն ենք. լուսապաղաղ
Երեկոն ալ իր տրտմալիր
Կ'ողբայ սրտին ցաւերն անքաղ:

Պահէ՛ր գայն, Տէր, քու անսահման
երանութեան մէջ լուսաջինջ,
Ու տուր ներա քու հայրական
Գրքութեան ցոլին, ու քող ոչի՛նչ
Զըխանգարէ ներա բուրեան
Խաղաղութեան պահերն յուզիչ:

Լըռութիւնն հոծ կ'իջնէ վըրան,
Ծածկելով քուսի եւ տերեւներ,
Մարդիկ կ'անցնին, ու կը մոռնան
Թէ քայլ մ'անցին կեանք մ'է շիջեր,
Եւ քէ ներա անմեղութեան
Խաչափայտն այդ շատ ծանր է, Տէր:

Նէ կը լըռէ. ինձ չի՛ խօսիր.
Մահուան հըզօր քեւերուն տակ
Լուռ է ընդմիջտ. բայց անբասիր
Յիշատակն իր քաղցր ու յստակ՝
Կ'ապրի յաւէտ անծայրածիր
Սիրոյս երկնի՛ տակ կ'ապուտակ:

Կ'անցնի ալիքն, ու սիւք մ'երկար
Թաւուտներուն մէջ կը շարժի,
Կը մենքըգէ հոգեպարար
Սըրինգն հովուի՛ն ըստանջելի,
Նըւագն որուն սրտիս համար
Կ'ըլլայ քրքու՛մ ըսպեղանի:

Ո՛հ, օրերն իմ կ'անցնին տըխուր,
Վարդագոյն կեանքն իմ երագած,
Անըստերիւք տեսիլներս հուր,
Իմ յոյսերուս ջահերն առկայծ
Կ'իյնան ձեռքէս, մինչ քաղցրալուր
Կը մահանայ սոխակն յանկարծ:

Կը լըսէ՞ք դուք իմ Գրքարին
Կոծն իրիկուան հծծիւնին հետ,
Եւ սրտառուչ ողբն անձկագին
Որ կը լսուի ներա անհետ
Շիրմաքարի շուրջն առանձին,
Հառաչներո՛ւ պէս վէտ առ վէտ:

Նէ գեղեցիկ էր ու բարի,
Ունէր խորունկ աչքեր կ'ապոյտ,
Վարսեր քել քել, եւ իր կոյսի
Հոգին ունէր կայծեր բոցուտ,
Որոնք աստղերն էին ծաւի
Իր սիրելի ճակտին անգոյշ:

Բայց կ'ուզէի որ ալ հատնէ՛ր
Տրամերգութիւնն այս տողերուն,
Զի ես կ'ըզամ որ դուք, ձայնէ՛ր,
Ներաշխարհի կեանքիս յորդուն,
Առնէիք քեւ, ելլէիք՝ վեր,
Դէպի կամարն երկնի անհուն:

Գեղեցիկ էք հանգոյն աստղի,
Եւ ցանկալի գարնան ճըման,
Պուրակներու դուք քաւարժի
Կը ձօնէք ձեր սարսուռն օրուան,
Մինչ լուսնակին տակ նագելի
Կ'ըլլաք անո՛ւրջն անտիրական:

Գիշերամուտ յոյսերուն ծոց
Դուք կը ծաղկիք սրտիս վըրայ.
Կը դողդոջէք անդորրահոծ
Ալեկներու դէմ շափիւղայ,
Ու կը ծըծէք խանդով մ'անոնց
Կարկաչիւններն հոգեհըմայ:

Կը հաւաքուիք յանկարծ լընին
Կղզեակներուն շուրջ լըռակեաց,
Ու խայտառակ սիրովն անգին
Կը լըսէք խօսքն երեքացած
Բարտիներո՛ւն որ կը շարժին
Մենութեան մէջ համատարած:

Զեր փափկասուն քեւերն աղուոր
Դուք կը հըպէք վարդին սարսուռն,
Որ իր քաղցրիկ նիւնջին մէջ խոր
Կը վերյիշէ լընին անուն
Յովհերն ի սփիւռ այս դարաւոր
Լալահառա՛չ փառնակներուն:

Ո՛հ, իմ սրտէս փախչող ձայներ,
Աստղերն անոյշ են այս անծայր
Առանձնութեան մէջ սիրաչեր,
Ուր ամէն ինչ ձեզի համար
Օրուան ժամերն այս օրհնաբեր
Ունի քառեր երգավառ:

Սիրոյ պէս նուրբ էք ու քեքեւ,
Եւ ամէկտ' հարսի ճըման,
Շառալիներու պէս լուսաքեւ
Կը դողդոջէք դուք սիրական
Կարմրաքերթիկ վարդին վերեւ
Առաւօտեան ժամին վարան:

Ես կը յիշեմ ձեզ կարօտով,
Եւ յուզումով անգուսպ եւ խոր,
Քոյրիկներն էք դուք անվրդով
Իմ իրկունին մէջ մեմուոր
Հսկող սրտին սիրագորով,
Եւ բընարին արտասուարոր:

Մանրիկ շուրթով դուք ձեր քոքով
Կը ժպտիք ինձ անմեղօրէն,
Բայց խոյս կու տաք արտաքանով
Իմ հոգիիս կածաններէն,
Երբ քափառկոտ կեանքս է խրոտով,
Ու սէրն իր մէջ՝ նիչ ու գեհեն:

Զունին ինձ պէս յուշեր ճնշիչ.
Զեր գոյութիւնն է լոկ հրնումք,
Դուք կը շրջիք լինելէ լին,
Տալով անդորր ալիքին կեանք,
Մինչ ձեր այցով ափերն ու խին
Կը գգան անվերջ շող ու բերկրանք:

Կը սիրէք զիս եղբայր մ'ինչպէս
Քըրքալան աչքերը վուշ,
Զի ամէն ժամ կ'անցնիք սրտէս,
Մինչ իմ հոգւոյն յոյզը մեղոյշ
Կ'ըլլայ չուին ձեր արփակէզ
Կշռոյքն անգայտ եւ մեղանոյշ:

Զէք լըքեր զիս իրկունին մէջ,
Երբ լինն է լի նաւակներով,
Եւ լոյսերու խաղովն անվերջ,
Նըրահագագ սըղոյսով գով,
Աղջկաներու երգովն անշէջ,
Սարսուռներով եւ սիրով ծով:

Թեւեղէք միշտ, ներշնչումներ,
Խարտիշահեր շողերու հետ,
Որոնցէք հովիտ ու լեռ,
Մարգեր՝ որոնք կ'ըլլան անհետ
Ըստուերին տակ խաղաղաբեր
Իրկուններուն երանաւտ:

Քաննապիոյ, Յուլիս 1953

Ի՛նչ յուզիչ է ձեր առաջին
Ճախրանքի քափն երկիւղով լի,
Ո՛րքան փափուկ ձեր վերելին
Անգուսպ տենչանքն անըջանքի,
Եւ ո՛րքան լոյս կայ ձեր նրբին
Թեւին վըրայ, որ կը քոչի՛:

Շրջեցէք միշտ ուր չըկայ սէր,
Ուր չըկայ յոյզ, վիշտ ու պայքար,
Ուր չըկան խորք մըտածումներ
Լուսայակներ մտքին համար,
Ուր մոռացո՞նք լոկ կայ անտէր
Մ'ընդորսի ծոցի՛ն գոհար:

Բարձրացէք դուք ամպերն ի վեր,
Աստղերն ի վեր կ'ապուտաչուի,
Ու ձեզի հետ տարէք հունչեր,
Հունչերն ազատ հովո՛ւն մուլի,
Հունչեր մարմնուն ու տարուբեր,
Հունչեր՝ գմբուխտ ջի՛նջ ալիքի:

Փախէք ինձմէ, ներշնչումներ,
Զի երկնին մէջ ամապուն
Վըտակներ կան երջանկաբեր,
Որոնց ջուրերն են օրն ի բուն
Հալած արծաթ, ալեր՝ որ ձեր
Բիբին պէս լուրք են ու սիրուն:

Եւ հրնուցէք, ներշնչումներ,
Առուակներու տեսով վընիտ,
Որոնց խորքին լուսնակն անտէր՝
Կը դողդոջէ ճըման վըտիտ
Նուրմաքարի՛ն երբ հովն ելեր
Կը գերյուզէ լին եւ հովիտ:

Բայց մի՛ մոռնաք զիս երբեք դուք,
Հոգիս մէջ շարժո՛ղ ձայներ,
Զի ես յաւէտ մասն եմ փափուկ
Անուրջներու պէս լուսաչեր
Ծաղկող կեանքի՛ն ձեր խուսափուկ,
Փոփրիկ ձայնէ՛ր անդորրաբեր:

ԱՐԱՄԱՅԻՍ ՍՐԱՊԵԱՆ